Արձանագրություն N 3
«ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/3ՏՀ» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» հունիսի 2018թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Թամրազյանը

I. Բաց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

- մասնակիցները սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան ներկայացրել է գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),
- հանձնաժողովի քարտուղարը վերոգրյալ փաստաթղթերը (տեղեկությունները), գնահատման թերթիկների երկուական օրինակները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը տրամադրել է հանձնաժողովի անդամներին,
- մասնակիցների որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել) և գնահատվել է «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

II. Բաց ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին և հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին
(Կ. Գասպարյան)

2. Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով,
- «Քարազարթ» ՍՊԸ -ին՝ 3-րդ չափաբաժնի մասով,

- «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ -ին՝ 8-րդ չափաբաժնի մասով:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր անգործության ժամկետի (10 օրացուցային օր) լրանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Կ. Գասպարյան)

3. «ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/3ՏՀ» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը օրվա ժամը 12:00-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կ. Գասպարյան

Անդամներ՝ Ն.Մեսրոպյան

Ա. Պապյան

Քարտուղար՝ Ս.Թամրազյան